Հեղինակ՝ Արմինե Ավագյան

ԽԱՂ «ՄԻ ԱՆԳԱՄ …»

Նպատակ – Զարգացնել երեխաների հուզական ինտելեկտը, երևակայությունը, համագործակցությունը հասակակիցների հետ

Տարիքային խումբ - 6-10 տարեկան

Մասնակիցների քանակ – 2-8 երեխա

Անհրաժեշտ նյութեր – հույզերը պատկերող քարտեր

Ընթացք - Քարտերը սեղանին դնել շրջված վիճակում այնպես, որ երեխաները չկարողանան տեսնել, թե ինչ պատկեր են վերցնում: Առաջին մասնակիցը վերցնում է քարտը և սկսում պատմել մի պատմություն, որտեղ գլխավոր հերոսը ապրում է այն հույզը, որը պատկերված է քարտում: Օրինակ՝ «Մի անգամ Արամը … »: Հաջորդ մասնակիցը վերցնում է մյուս քարտը և պատմությունը շարունակում այնպես, որ հերոսի ապրումներն արտահայտեն իր վերցրած քարտում պատկերված հույզը: Յուրաքանչյուր մասնակից շարունակում է պատմությունը նույն սկզբունքով, իր խոսքը սկսելով. «Իսկ հետո Արամը…» բառերով: Կարևոր է ցույց տալ մի հույզի փոխակերպումը մյուսով: Կարևոր է նաև մտքի ընդհանրությունը պահպանելը. յուրաքանչյուրի պատմությունը պետք է տրամաբանորեն կապված լինի մյուսի հետ ու շարունակի նախորդ մասնակցի միտքը: